ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

03.04.2019թ. կնքված N ՍԴ-ԳՀԱՊՁԲ-19/23 գնման պայմանագրի

ք. Երևան «07» հունիս 2019թ.

ՀՀ սահմանադրական դատարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Է. Ղազարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և Էկոմիքս **ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Գասպարյանի**, որը գործում է *Ընկերության* կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 03.04.2019թ. կնքված **N ՍԴ-ԳՀԱՊՁԲ-19/23** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհրաժեշտություն է առաջացել պայմանագրի առարկա, ՀՀ ՍԴ վարչական շենքի նորոգման համար ևս 265կգ լատեքսային ներկի գնման համար, և հաշվի առնելով ՀՀ գնումների մասին օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը, կողմերը որոշեցին՝

Պայմանագրի գնից բացի՝ պայմանագրով չնախատեսված 265 կգ լրացուցիչ լատեքսային ներկի գնման դիմաց վճարել 89782 դրամ՝ ըստ համապատասխան հաշիվ-ապրանքագրի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը է **1 էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սահմանադրական դատարան ք. Երևան, Բաղրամյան-10 Բանկ՝ՖՆ գործառն. վարչություն Հ/Հ 900011179083 ՀԿՀՀ 00018357 (ստորագրություն)	Էկոմիքս ՍՊԸ ք. Երևան, Ա. Բաբաջանյան 60/2 Ինեկոբանկ ՓԲԸ Հ/Հ 205282207021100 ՀԿՀՀ 01235701 (ստորագրություն)